## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 30.10.2023 թվականին կնքված N ԵԱ-ԳՀԾՁԲ-23/56 գնման պայմանագրի

ք. Երևան «31» 01 2024թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի ժ/պ Հ. Մանուկյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Մ. Մարտիրոսյանի, (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 30.10.2023թ. կնքված N ԵԱ-ԳՀԾՁԲ-23/56 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.15 կետերը և հաշվի առնելով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված ապրանքների ձեռքբերման համար հատկացված **59,250,000/հիսունինը միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող,** շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին:

2. Հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի հավելված 1-ի:

### 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**
«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163078035496
ՀՎՀՀ 00875439

Տնօրենի ժ/պ՝ ____________ Հ. Մանուկյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ավետ Ավետիսյան 116/1 և 116/5
«Ակբա Բանկ » ԲԲԸ
Հ/Հ 163078035496
ՀՎՀՀ 00031904

Տնօրեն՝ ____________ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1*
*«30» հոկտեմբերի 2023թ. կնքված*
*N ԵԱ-ԳՀԾՁԲ-23/56 ծածկագրով պայմանագրի*
*«31» 01 2024թ. կնքված*
*թիվ 1 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/Հ | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | Ապրանքի անվանումը | Չ/մ | Ընդհանուր քանակը | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թթ՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | Ընդհանուր գինը** |
| 1 | 66511170/507 | փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ /Higer/ | դրամ | 1 | 1,800,000.00 | 3,600,000.00 | 5,400,000.00 | 7,200,000.00 | 9,000,000.00 | 10,800,000.00 | 12,600,000.00 | 14,400,000.00 | 16,200,000.00 | 18,000,000.00 | 19,800,000.00 | 21,600,000.00 | 21,600,000.0 |
| 2 | 66511170/508 | փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ /Zhongtong/ | դրամ | 1 | 2,637,500.00 | 5,275,000.00 | 7,912,500.00 | 10,550,000.00 | 13,187,500.00 | 15,825,000.00 | 18,462,500.00 | 21,100,000.00 | 23,737,500.00 | 26,375,000.00 | 29,012,500.00 | 31,650,000.00 | 31,650,000.0 |
| 3 | 66511170/509 | փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ /Gazel/ | դրամ | 1 | 500,000.00 | 1,000,000.00 | 1,500,000.00 | 2,000,000.00 | 2,500,000.00 | 3,000,000.00 | 3,500,000.00 | 4,000,000.00 | 4,500,000.00 | 5,000,000.00 | 5,500,000.00 | 6,000,000.00 | 6,000,000.0 |
| **Ընդամենը** | | | | | | | | | **59,250,000** | | | | | | | | |

ՀՀ դրամ

անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի հրապարակված, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:
** Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

**ԳՆՈՐԴ**
«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163078035496
ՀՎՀՀ 00875439
Տնօրենի ժ/պ ______________ Հ. Մանուկյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ավետ Ավետիսյան 116/1 և 116/5
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 163078035496
ՀՎՀՀ 00031904
Տնօրեն՝ ______________ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

ConverseBank

«29» 01 2024

№ COD/0100

**Հավելված 4.1**
**ԵԱ-ԳՀԾՁԲ-23/56 ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

**ԵՐԱՇԽԻՔ N COD/0100**
**(որակավորման ապահովում)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից թիվ ԵԱ-ԳՀԾՁԲ-23/56 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից 30.10.2023թ.-ին կնքված N ԵԱ-ԳՀԾՁԲ-23/56 ««ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ» (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 4,747,500.00 (Չորս միլիոն յոթ հարյուր քառասունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 163078035496 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման վերջնաժամկետի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 16/06/2025թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ info@epromotion.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵԱ-ԳՀԾՁԲ-23/56 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Իրավասու անձ՝

Վարկային գործառնությունների պետ
Head of Credit Operations

Արշակ Խոջոյան
Arshak Khojoyan

Պատասխանատու՝ Ն.Ղալումյան/ 010 511 211 (2225)

«29» 01 2024

№ COD/0099

**Հավելված 5**
**ԵԱ-ԳՀԾՁԲ-23/56 ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

**ԵՐԱՇԽԻՔ N COD/0099**
**(պայմանագրի ապահովում)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև 30.10.2023թ.-ին կնքված N ԵԱ-ԳՀԾՁԲ-23/56 ««ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ» (այսուհետ՝ պայմանագիր) բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 3,165,000.00 (Երեք միլիոն մեկ հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 163078035496 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման վերջնաժամկետի՝ ներառյալ երաշխիքային ժամկետը, օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 16/06/2025թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ info@epromotion.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵԱ-ԳՀԾՁԲ-23/56 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Իրավասու անձ.՝

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ, 00000291 ք. ԵՐԵՎԱՆ, Վ. ՍԱՐԳՍՅԱՆ 26/1
Վարկային գործառնությունների համար
Վարկային գործառնությունների պետ
Head of Credit Operations
Արշակ Խոջոյան
Arshak Khojoyan
ստորագրություն
signature
For Credit Operations
26/1 V. SARGSYAN str., YEREVAN
CONVERSE BANK CJSC, 00000291

Պատասխանատու՝ Ն.Ղալումյան/ 010 511 211 (2225)